# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

## 4. ՅԱԿՈԲ ԿՈՋՈՅԵԱՆ

*Իբրեւ նկարիչ Կոջոյեան օժտուած է բազմերանգ տաղանդով։*

*Ամենից առաջ նա առաջնակարգ գրաֆիկ է։ Այդ ասպարէզում նա մինչեւ օրս էլ չունի իր մրցակիցը։*

*Կոջոյեանը նաեւ տաղանդաւոր զարդանկարիչ է։ Ունի նաեւ մի շարք այլ մօտիւներ, որոնց նիւթը Հայաստանի բնութիւնը եւ հայ գեղջուկ ժողովրդի կեանքն է։*

*Ուշագրաւ են նաեւ նրա պարսկական տպաւորութիւնները, ուր իսկական Արեւելքն է իշխում։*

*Յիշատակենք եւ նրա մետաղների, գլխաւորապէս արծաթի վրայ փորագրութիւնները, որոնց մէջ հին հայկական արուեստի ոգին է զգացւում։*

*Ծնուել է նա Հիւս. Կովկասի Վլադիկովկաս քաղաքում 1883 թուին։ Միջնակարգ կրթութիւնն ստացել է քաղաքի ռէալական դպրոցում, իսկ բարձրագոյնը՝ Միւնխէնում (Գերմանիա)։ Աւարտել է Միւնխէնի նկարչական ակադեմիան 1907 թուին։*

*Այսօր ապրում է նա Երեւանում, ուր ուսումնասիրում է նոր կեանքը։*



ԳԻՒՂԱՑՈՒ ՏՆԱԿԸ (ԳԵՂԱՐԴՈՒՄ)

Նկար՝ Յակոբ Կոջոյեանի

*ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ*

Fonds A.R.A.M